600.0439.30.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2018 թվականի №439Ա

ք.Երևան

«ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 3-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Պրոմ Սինթեզ» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի վարչական տարածք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2040 թվականի դեկտեմբերի 1-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը:
2. Հաստատել «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Պրոմ Սինթեզ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
30 նոյեմբեր 2018թ.